

ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին Կ. Պոլսոյ հմր. 10 լրէս.
Պաշտպան Կ. Պոլսոյ 2 լրէս.
Վեցամս. Կ. Պոլսոյ 5 լրէս.
Պաշտպան Կ. Պոլսոյ 1 լրէս.
Օտար երկիրներու 30 հմր.
Պատուական տողը մէկ անգամի հա-
մար 3 զուրուշ, երկու անգամի հա-
մար 2 զուշ 5. աւելի անգամներու
համար զատ սակարկութիւն կըլ-
այ :
Խրաքանչիւր թիւ 50 փարս արծ :




ԼՐԱԳԻՐ

ՀԱՆԱՊԱԶՕՐԵԱՅ

ՊԱՅՄԱՆՔ

Դուրս գնացած լրագրող հանրու-
ծակը խմբագրութեան վրայ է :
Լրագրող վերադարձող համար
կամ որ և ինչ գրութիւն խմբագրութեան
— հետքերն ախտի ու դրուի : Ղալա-
թի Սանտրոքըրոր Հաստիսի թիւ
198, Դարս խմբ. Մասիսի գրասեն-
եակը :

Հանրու ծախքը խմբագրութեան
մակ չընդունուի :
Չտարած համարը չի տրուի, եւ
եւ չեն տրուի :



ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿԱՍԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 12 ՅԱՆՎԱՐԻ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Եզրիպտական և Հելլենական խն-
դիներն իրենց տաղանդաւոր շըր-
ջանը կը մոռնան, և Օտմանեան նա-
խարարաց զիշեր ցորեկ խորհրդա-
ծութեան նիւթ կուտան : Շարժիկ օրը
մինչև իրիկուն Բ. Դուռը նախարա-
րաց խորհուրդը եղաւ, և գիշերը նա-
խարարը կայսերական պալատը գը-
նացին, ուր վեհ. Սուլթանին նախա-
դասութեան ներքեւ խորհուրդը շա-
րունակեց : Կը կարծուի որ այս խոր-
հուրդներն իշխողական խնդրոյն վը-
րայ էին. քանզի Գաղղիոյ և Անդղիոյ
ընդհանուր հիւպատոսները խափվին
առաջարկած լինելով որ կա՛մ հրա-
ժարի և իշխանութիւնը իւր անդը-
րանիկ որդւոյն Մէհմէտ թէվֆիգ
փաշային թողու, կա՛մ իւր երեքուն
պարաքերն անմիջապէս վճարէ : Նորին
Բարձրութիւնը քառասուն և ութ
ժամ խնդրած էր Բ. Դուռը Բ. Դուռը
նախկինը համար : Բ. Դուռն որոշու-
մը ճշդիւ չգիտցուի, բայց հարկաւ
խափվին անձնական շահերն ուշադ-
րութեան չկրնար առնուլ : այլ միայն
վեհ. Սուլթանին գերիշխանական ի-
րաւունքը պահպանելու ամեն ճիգ
պիտի թափէ : Այս պարագայից մէջ
խափվին վիճակը ծանր է, իւր երե-
քուն պարտուց անմիջապէս վճարու-
մին անկարելի է, և կը մնայ իշխա-
նութեան հրաժարի, որոյ համար ո-
րոշում մը տալու կը վարանէ :

Եզրիպտական արտաքին դործոյ նա-
խարար Շէրիֆ փաշան ընդհանուր
հիւպատոսաց շրջաբերական մը գը-
րելով կը ծանուցանէր թէ տպրել 22ի
երմասկան հրամանագիրն, որոյ գէ՛մ
տէրութիւնը բողբոսած էին, չընտա-
ծէ : Թէ եզրիպտական կառավարու-
թիւնն անմիջական միջոցներ ձեռք
պիտի առնու երեքուն պարտուց վը-
ճարման և միացեալ պարտուց առ-
կաւոր և տպահովութեան ամբողջ
հատուցման համար : Բայց տէրու-
թիւնը խափվին խոստումներով գոհ
եղած լինելու չեն, որ դարձեալ ա-
նոր հրաժարականին վրայ պնդած են :
Այս խնդրոյն վախճանին գալով հա-
ւանական է որ եթէ խափվին հրաժա-
րական տայ, տէրութիւնը բարոյա-
կան հատուցում մ'առանալով խնդ-
րոյն դրամական մասին իրենց պա-
հանջումները կը մեղմնէ : Թէվֆիգ
փաշան համակրական է, և տակաւին
իւր հօրը սխալմանց մէջ ինկած չէ :
Ուստի արատէ գերծ լինելով պաշտո-
նի պիտի անցնի, և եթէ տէրութեանց
խորհրդոյն համեմատ չարժի, եզրիպ-
տական խնդիրը կրնայ վերջանալ :
Բայց խափվը դիւրաւ պիտի կրնայ
հրաժարի, ամեն իշխան չուրի իւր

դահէն ինչեւ, և խափվը բացառու-
թիւն մը չէ : Բայց հաւանական է
նաեւ որ Բ. Դուռը կանխելով պաշ-
տոնական ընէ զայն և յաջորդը կար-
գէ : Բիշ Ժամանակէն դործին վախ-
ճանը կրնամը իմանալ :

Խաղ Հելլենական խնդրոյն գալով,
տէրութեանց դեպքանքն ուռանձ-
նակի՝ բայց միաբան ծանուցադիր մը
տուին Բ. Դուռն, առաջարկելով որ Հել-
լենական խնդրոյն վրայ բանակցելու
համար իւր պատուիրակները կարգէ :
Հելլենական պատուիրակները վեհա-
ժողովին 13րդ. առնանգրութիւնը
բանակցութեանց հիմ պիտի առնեն
եղեր : Բայց Բ. Դուռը չկրնար Ալպա-
նիացոյ պահանջներն արհամար-
հելով Հելլենացիները գոհ ընել : Ալ-
պանիացիք կը պահանջեն որ Արտա,
Բիշվէզա և Եանեա ցունաստանի չը
արուին : ասոր համար ամեն գոհ-
գովութիւն ընելու պարտաւորուած են :
Յունաստան Նպիրոսի սահմանին մօտ
Լէքէսոսի մէջ զորաբանակ մը կազմեց,
որոյ ղեկավարութիւնը Զոր-
ամանաց համեմատ Եանեայի կողմը
թուրքիւս և մեծ պարտաւորութիւն
ներ կը տեսնէ : Նոր հրամանատար
Հասան Թահսին փաշան Եանեա հաս-
նելով՝ տեղւոյն երեւելիներէն ըն-
դունուեցաւ, և իրեն ներկայած ու-
ղերձով մը Ալպանիացիք յայտարա-
րեցին թէ իրենց իրաւունքը պաշա-
պանելու համար իրենց արեան վեր-
ջին կաթիլը պիտի թափեն, և յոյս
յայտնեցին թէ Բ. Դուռն իրենց դա-
ւալ չիմուր : Հասան Թահսին փա-
շան պատասխանեց թէ իրենց այս
բողբոսքը վեհ. Սուլթանին պիտի
հաղորդէ : Եանեայի ցոյններն իրենց
դատը պաշտպանելու համար Պ. Պա-
ղիլի, Պ. Սըրուսի և Պ. Մէլաս պատ-
ւիրակ կարգած են տէրութեանց դե-
պաններուն քով : Ալպանիացիք զայս
ընելով իրենք ալ հազարաւոր ըստո-
րակութեան մի փոխանորդակիր մը
ղրկեր են մայրաքաղաքս դանուդ
Մէհմէտ Ալի և Ալպալու պէյերուն,
որը դեռ նոր դարձան իւրաքանչիւ,
ուր Ալպանիացոյ կողմէն յիշատակա-
ղիր մը ներկայած էին տէրութեանց,
և զանոնք դարձեալ իրենց պատ-
ւիրակ կը կարգեն դեպանաց քով :

Ժամանակիս անցից մէջ անկարե-
լի է չիշել Նարոյէն Գի դժբաղդ-
որդւոյն ցուալի մահը Զուրուներուն
հարուածոյ ներքեւ : Երկուստեք
կայսրութիւն իւր ծնողաց Անդղիա ա-
պաստանելէն ետեւ, վաւելի զինուո-
րական վարժարանը կրթութիւն տ-
աւա : Կըսուէր թէ ինք մեծ ձիւքեր
չունի, բայց անտարակոյս մեծ սիրտ
մ'ունի եղեր, որ իւր գերբաստանին
գէ՛մ եղած յարձակումներէն ի խոր
խոցեալ, պատուոյ փառնաւոր աս-

պարէզը նետուելով, կա՛մ համա-
փառակերտ կա՛մ զիւրազնարար մեռ-
նելու որոշում տուած էր : Երբ կայս-
րութիւն իւր այս նոր ճանապարհոր-
դութեան կը ձեռնարկէր, թշնամի
թերթեր կը հեգնէին զայն և կըսէին
թէ Եւգլինէի որդին քանի մ'ամեն
ողջ առողջ կը դառնայ : Բայց կայս-
րութիւն, որ Նարոյէն Գի լինելու փա-
ռասիրութիւնն ունէր, Զուրուներուն
գէ՛մ բացուած պատերազմին պատ-
ւոյ տեղն՝ այսինքն յառաջագահաց
կարգն ընտրեց, և արիւրար մեռաւ :
Անտարակոյս իւր անունն անջնջ պի-
տի մնայ պատմութեան էջերուն մէջ,
և պէտք է որ այսուհետեւ չարախօ-
սութիւնը լռէ : Բայց ո՛վ որ լինի իւր
ժառանգն, իւր մահուամբ Նարոյէն-
եան գերբաստանին Գաղղիոյ մէջ իշ-
խանութեան վերադարձի հաւանա-
կանութիւնները կը նուազին և հան-
րապետութիւնը իր նախնիներէն մը պա-
կաս կուենայ : Նարոյէն Գի զոհ գը-
նաց իրենցերուն սխալմանց, ինչպէս
նաեւ բաղդին անյաջողութեան :

Աթէրի Միհմէտ Բաղդին մէջ
կը կարգաւոր թէ Հելլենական խոր-
հուրդարանին անդամ մը դրուելու Պ.
Ֆիլէմոս՝ փափաքելով Հայկական դը-
րախանութեան ճիշդ մ'այ կազմել
Ժողովին մատենադարանին մէջ, զոր
իւր ջանիւր և հոգածութեամբ օր
ըստ օրէ կը հարստացնէ, Զմիւռնիոյ
Հայկական ընթերցարանին գլմեր և
հոգաբարձութեան խնդրեր է որ
իւր գլխավորութեան իրականացման
համար իրեն օգնէ : Բիշվէզաբանին
նախագահը՝ Պ. Պ. Ս. Ալպանեան,
հելլենասիրական զգացմամբ և ճշ-
մարտապէս արեւելեան տեսութեամբ
ի նամակով մ'իմացուցեր է Պ. Ֆիլ-
լէմոսին թէ հարկիւր հատորէն աւելի
Հայերէն դրաց հաւաքածոյ մը, որ
Յունաստանի երեսփոխանաց Ժողովին
ընծայեալ է, Զմիւռնիոյ Հելլենական
ընդհանուր հիւպատոսարանին յանձ-
նուած էր : Պ. Ֆիլլէմոս փութացեր է
պատասխանել Պ. Ալպանեանին սի-
րալիր նամակին, և չնորհալով թիւն
յայտներ է թէ՛ անոր և թէ՛ այն նը-
շանաւոր Հայոց, որը իրենց նուէր-
ներով յիշեալ հաւաքածոյն կազմե-
լու դործակցած էին : Զիշեալ Հել-
լենական լրագիրը կը ծանուցանէ նա-
եւ թէ Հայկական դրաց ուրիշ հաւա-
քածոյներ ալ պիտի ընծայուին հել-
լենական երեսփոխանաց Ժողովոյ մա-
տենադարանին, և հետեւաբար Հայ-
կական գրականութեան ճիշդ պիտի
ամբողջանայ : Զիշեալ լրագիրը փա-
փաք կը յայտնէ որ բոլոր արեւելեան
գրականութեանց համար սոյն մատե-
նադարանին մէջ հաստատուելու մաս-
նաւոր ճիւղերն ՚ի մնայ ամբողջա-
նան, որպէս զի արեւելեան Ժողովը
դոյ պատմութեամբ և քաղաքակր-

թութեամբ զբաղող ամեն անձինք
կարենան օգտակարապէս հան գիմել :

Խաղիոյ երեսփոխանաց Ժողովին
մէջ նախարարաց խորհրդոյ նախա-
դաս և արտաքին գործոց նախարար
Պ. Տէրթէթի Սիկիլիոյ Գալաթիոյ
նօքսում գիւղը ծագած անկարգու-
թեանց նկատմամբ իրեն ուղղեալ
հարցման մը պատասխանելով՝ յոյ-
տարարաց թէ 400ի չափ գիւղացիք
մտերս հաստատուելու տուրքէ մը գըժ-
դոհելով, գիւղացեալին նստած տու-
նը և յիշեալ արոց բաշխման ցու-
ցակներն այրեր են : Ասոր վրայ զօրք
գրկուեր է, զորս գիւղացիք “կեցցէ”
թաղաւորը, կեցցէ՛ թաղաւորն, ա-
ղաղակներով սղուներ են, բայց եր-
բոր յիշեալ զօրքերը մարդ ձեռքա-
կալել սկսեր են, գիւղացիք քարեր
արձակել են անոնց վրայ, զօրքերն
ալ գէշը գործածել սկսեր են, հե-
տեւաբար գիւղացոյ կողմէն հինգ
մարդ մեռեր : քանի մը մարդիկ ալ
վիրաւորուեր են : զօրաց մէջէն ալ
հինգ հոգի վիրաւորուեր են, չոյն
միջոցներու ընթացքին մը զօրք ալ գը-
լով բարեկարգութիւնը վերահաս-
տատեր է :

Հարաւային Ամերիկայի մէջ պա-
տերազմը կը շարունակէ Բիլիի և ա-
նոր երկու անհաջաթ թշնամեաց՝ այն է
Փէրուի և Պոլիվիոյ միջև : Բայց մին-
չև ցարդ վիճարական դործողու-
թիւնը մանր մուր կուենալու վրայ
կը կայանան, և մինչև որ մեծ կռիւ
մը պատերազմաւոր միջին ծանր հար-
ւած մը չտայ, թերեւ պէտք չպիտի
լինի սպանել որ այս համատեւ Ժո-
ղովրդոց մէջ արեւհեղութիւնն ար-
դիւրեւ համար բարեկամական մի-
ջամտութիւնը տեղի ունենան, և որ
խաղ կրեւի իւրաքանչիւ լրագրաց ո-
մանց տուած այն լուրը թէ Գլոմա-
նիա միջնորդութիւն ընելու ձեռնար-
կած է : Պիմաքը իշխանը շատացեր է
միայն Փէրուի կառավարութեան բո-
ղբերով և բացառութիւն պահան-
ջելով գերմանական կառավարելի նա-
ւաւ մը նկատմամբ, որ Փէրուի Գալլա-
նուահանգստին իշխանութեանց գը-
րաւեալ էր :

Գալով Անդղիոյ, նա իրապէս փորձ
մը փորձեց՝ պատերազմին հրատարա-
կութեան յետոյ բարեկամական միջ-
նորդութիւն մ'ընելով թշնամութիւն
ները գաղթեցնելու : Բայց այս նա-
խաձեռնութիւնը բնաւ յաջողու-
թիւն չտաւ պատերազմաւոր քով :
Փէրուի արտաքին գործոց նախարա-
րը՝ Լիմա նստող անդղիական դե-
պանին չնորհալով թիւն յայտնեց,
բայց միանգամայն իմացուց թէ Անդ-
ղիոյ միջնորդութիւնը քիչ մ'ուշ հա-
սած էր :

ցածնեան ան յոյս կայ որ պիտի ազատին, վասն զի Զէյթունիք իրենց ապստամբ չըլլալն խոստովանելով՝ վստահ ընդհանրեց սիրով ընդունած և անոնց առաջադրութեանցը կատարելով հնազանդութիւն ցուցած են։ Զէյթունիցը կառուածները վերադարձնելու համար իրենց պիտի գործադրեն և ըստ այնմ տուրք պիտի պահանջուի։ քաղաքէն մէկ քառորդ ժամ հեռավորութեամբ զօրանոց մը պիտի շինուի։ Նաև կրտսի թէ հեռագրական թել մ'ալ պիտի հաստատուի Մարաշէն այն տեղը։

Հայրենիք լրագրոյ 323 թուոյն մէջ կը կարդանք որ Տէր Մարգարէանը տեղւոյն Անդղոյ հիւպատոսարանին և Մարաշի Մուրատեան թարութիւն էֆէնտին Անդղոյի Մըլիմը Համաթին թարգման կարգուած են։ առաջինը բաշտովին անհիմն է, իսկ երկրորդն առժամանակեայ, որ արդէն լրացած է։ այս բարին հեղինակը՝ բոլորովին անմիտ խիթար՝ այսպիսի անտեղի և անպատշաճ տեղեկութեամբ միտթարութիւն կ'երարդէ պարզամիտները խորհրդով և իր կոյր գործիքները բարձրացնելու օգտին, որ արդէն հասարակութենէն իրենց անցեալներովը գնահատուած են։ Դժբաղդաւոր այս անտեղի տեղեկութեանց հեղինակին այժմ՝ Մարաշէն խիտ հեռու գտնուելով՝ չէ կրցեր այսպիսի տեղեկութիւնները դարձնել այն տեղէն զրկելով հրատարակել տալ։

Խմբագիր Տէր, սոյնը Զեր պատահան լրագրոյն միջոցաւ հրատարակելու բարեհաճեցէք։

Որով մնամ . . .

Կրկին Բաաթէն 26 մայիս 79

ՍԱՀԱՄԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ Ի ԲԱՍՏԵՆ

Տէր . . .

Ներկայ ամսոյ սկիզբները կարճ ժամանակու մը հետո՝ Գեր. Թարութիւն Սրբազանը կարճացող տարւոյն նորոգելու վարժարանի շինութիւնը լրացնելու համար Սօգանդուր անապատէն խիտ մեծ դժուարութեամբ տունուած փայտերը որ Բաաթէն Հայերը առնոց վարձքի կարին տարին, նորա համար օրհնութիւն մը և շնորհակալութիւնը յայտնելու նպատակաւ Բաաթէն եկած էր։ արդէն գիտէր որ Սահմանագրութիւնը դեռ գործադրուած չէ Բաաթէն, Երզնայի գիւղը հաւաքեց ամեն գիւղէ քանիցս Հայեր, օրհնութիւն մը խօսեցէ վինի զգացող նորա անհրաժեշտ պէտքը և ազատ քառարկութեամբ վեց անգամէ բազկացեալ Քաղաքական Ժողովի կազմեց նախագահութեամբ Արթ. Տիմիթիոս Ժ. վարդապետի, Տօմի գիւղէն Պօյաճեան Եօզպէկ աղան ատենապետ, Վէլի պապա գիւղէն Թարութիւնեան Դուկաս աղան փոխ ատենապետ, Արիմէլիէի խաչատուրեան Եսայի թիւն, Իւլիքանէն Սաքայեան Բալոր, Գումաճօրէն Անիմատ, Երզնէն Դանիէլ աղայ, ու անդամք։

Եֆէնտի, վաղը կարենցիք Սահմանագրութեան տարեգրարձը պիտի կատարեն քաղաքին մօտ Լուսաւորայ վանքը։ առաջին անգամ Բաաթէնցիք ալ շնորհիւ կարենց աղայները առաջնորդին նոր հիմ գրինք Սահմանագրութեան գործադրութեանը, բայց ինչ օգուտ որ կազմեցան և կարենց գաղթականք օրէ օր կը չանան։ մեր վրայ Տէրը սոյնմի, նախ մեզի և ապա այլոց։ Ամսոյ 23ին Հասան դաւաի և Քեօփրիւ քեօյի մէջ տեղը՝ որ երեք ժամէ, նոյն գիւղի Տէր իսրայէլ քահանան և երեք իշ-

խան, որ Հասան դաւաի գիւղ կը գաւառային, իրենց գիւղին գետը մետեցած՝ չորս հրազինեալ Ֆիւրտ կը բռնեն վերոյիջեալ անձինքը լաւ մը կը կարգարեն, հինգ հազար զինքն աւելի սկիւ և արծաթ գրամ, քսանի չափ 100նոց թղթադրամ, ժամացոյց հազուստ և երեք ձի բարուն ալ կը տանին, իրիկուան ժամը տանի միջոցները։ Նոյն գիւղերը ժամը 2ին Քեօփրիւ գիւղից եկան Հասան դաւա, կառավարութեան խնայողին, բայց դադող չեղաւ։ հետեւեալ օրը որ է 24 մայիս, ժամը 1ին դայմագամ պէյն և ժամադրանցի հարկբա պետը քանի մը ժամադրանցով դռները դռնալու գայած են։

Արեւելեան ազգագուտ ընկերութեան առաջին ըրած ծառայութիւնները կարգաւոր, իրեն ազգային անհատ չկրցի դադող ինքզինքս՝ այս մասին զգացած ուրախութիւն և առ ընկերութեան Մեծ անձնաւոր անգամանակեցած շնորհակալութիւնս հրապարակաւ յայտնել։

Իրաւի այսպիսի ազգագուտ ընկերութեանց, մանաւանդ այդ ընկերութեան որ Հայաստանի այլ և այլ տեղերը վարժարաններ բանալով մեր տարաբաղդ ազգին երկրորդ Լուսաւորից կը հանդիսանան, ամեն Հայ ընկ շնորհակալութեամբ իւր պարտքը կատարած չլլար՝ մինչև որ իր կարողութեանը ներածին չափ նիւթապէս չի մանակցի։

Ուստի իմ նիւթական կարողութիւնս չի ներքին հաստատուելու համար հինգ տարիէ ի վեր Բաաթէն վարած պաշտօնիս վերաբերեալ վկայագրելի օրինակներ ձեռնարկեալ Ձեզ խաւրեցի առ ի հրատարակութիւն։

Եւ Արեւելեան ընկերութեան ալ նուէրս այս ըլլայ։ Բոտ սրբազան Առաքելոց «գարձաթ և ոսկի ոչ ունիս» այլ զոր ինչ ունիս տամ քեզ»։ Ես ալ իմ անձնականայն սիրով կը ներկրեմ ընկերութեան որ և ինչ ծառայութեամբ ձերապէս աշխատելու մէկ տարի։ և յաւով եմ որ պիտի ընդունին մեր այս նուէրը յիշելով որ կաթիլ մի ձուրն ալ ուրիշանոսներ կաղմեւու կը նայատեն։

Եֆէնտի, ներկայ Զեր աղանի Մարաշի մատակայ թերթերուն մէկուն մէջ ընդունեալ խնդրելով Մնամ . . .

Սերգէյ (Ս. Արեւելեան)

Վան 12 մայիս 1879

Տէր . . .

Խոստատար ընկերութեան ամենաբարձր մեք որ կը գիտեմք այս նախնական Զեր մեծութեան։

Արդեօք ձեր ուշադրութիւն դարձուցած էք վանայ որբերուն և աղքատիկ մանուկներուն վրայ որոնք բարոյական և պատմաւոր կեանքէ զուրկ կապրին, իրենց անտեղութեան և չքաւորութեան պատճառաւ Արդեօք կաշխատիք ձեռն տալ այն աղագուտ ընկերութեան, որ յիշեալ թշուառներուն պաշտպան և խնամակալը հանդիսացած է, և կաշխատի նոցա բարոյական և նիւթական պիտոյք ձերապէս մատակարարելով դանտը Հայութեան և մարդկութեան օգտակար անգամներ ընել։

Մեք մեր մէկ ձեռքով հայրենանաւէր Հայրենի գիւղութեան գուռ բաղկեցինք, և միւսն ալ Զեր հայրենասիրութեան կերկրեմք արտասուալին Այս աղբիւրը միայն մեր փոքրիկ խումբին համար չէ, այլ այն հարկբաւորներու համար՝ զորս խնամելու կարողութիւն չունին դեռ մեր խնամակարներ։

Փութայէք . . . Տէր, փութայէք. . . ընկերութեան ոյժ տալ որ Հայաստանի ապագայ յոյսերը չկորսուին թշուառութեան գրին մէջ, և Հայաստանի համար բարեկիրթ և Հայրենասիր մեք սերունդ մը պատրաստուի։

Խնամարար Բնի. ամէն

Ձիւնիս 2 յունիս 1879

Ազնիւ Մարա . . .

Նախնական ընկերութեան համար մատակարարելու Զեր ներդրումներն ինչպէս ըլլալով՝ այս անգամ քանի մը տեղական և յուրեք կը հաղորդեմ, խոստանալով այսուհետեւ «թղթակցութեան» թելը այս չափ չը թուցնել։

Զմիւռնիոյ բոլոր ողջամիտ Հայոց հետ ես ալ ոչ նուազ ուրախ եմ «Արշալոյս» ի խորագրին փոխառութեան համար։ Նուրջ տարի մը հայկական այդ անդրանիկ թերթը կերպ մը շահանալու միջնորդարեան դադարներով անո՞ւ «Հայկական» մը ձեռքը մնաց, և անխղճօրէն դայն իւր զբոսարարութեանց ու շտապարարութեան ասպարէզը, ինչպէս որ ամեն հետաքրքիր ընթերցողաց յայտնի է։ Բայց այսօր այլն է։ Ստալանեան չէ Արշալոյս խորագիրը։ Ազնիւ և ուսումնական երկտառով մը՝ մեր յարգելի բարեկամ Պ. Յ. Սահմանէն յաջորդեց դայն, և Արշալոյս 1118 թիւէն սկսելով խմբագիր ճանչցուեցաւ։

Պ. Սահման իր առաջին թիւով ցուցաւ որ ճշմարիտ խմբագիր մը յատկութիւններ՝ և զանոնք կատարելագործելու ընդունակութիւն ունի։ զի նախ հրապարակեց Զմիւռնիոյն նպատակը աղագուտ ձեռնարկի մը՝ Արարատեան ընկերութեան, որուն պաշտօնական նախնական անգամ չկրցաւ պատասխանել Պ. Սահմանեան, թող թէ անոր վրայ մանաւոր սեր մը ունենալ, և իր խելքը խաղաղութեան օրով համակրական ճշմարիտ ու անկեղծ քաջաբեր կարգաւ և իր քաղաքակցներուն ուղադրութիւնը դարձնել անոր վրայ։

Գոցեմք անոր միտակց պաշտօնավարութեան և վարապետը և խօսինք քիչ մը ներկային վրայ։

Փափաքելի է մեզ իրօք տեսնել որ Արշալոյս նոր ուղղութիւն մ'առնայ իր նոր խմբագրին հրատարակութեան ներքեւ և ամեն Հայու համակրութեան արժանի լինի։

Պ. Յ. Սահման արդէն բաւական երեսցած է Հայ-դրական տաղարիկին վրայ իւր քանի երկերով։

Նա գրած է «Կրթատեսչար Մարի Տայեանը» բանաստեղծական դոգտրիկ եղերով։ Թարգմանած է նաև «Սոկրատի ոգին» անուն դործը, որուն մէջ յարգի թարգմանելու համայնապէս ու ոգեկան հեղինակին հետ ներկայ դրական աշխարհի մէջ իտականի վերնաշառաւ ներքեւ առաւելելով ընդհանուր ճշմարտութիւններ կը հետապնդեն։ Վերջին օրերս թարգմանեց Վիլհելմ Զիլիսի «Պապ» ու նախնական քաջատեղութիւնը։

Տակաւին Արշալոյսի երկրորդ թիւն հրատարակեց Պ. Սահման, սակայն յայտնի կերպի որ հետզհետէ առաւելագոյն օգտակար և կարեւոր յօդուածներ կարգաւ բարեազդուութիւնը կուենանք։

Շնորհաւորելով մեր բարեկամին այս փափուկ և դժուար պաշտօնը, ի բոլոր սրտէ կը մաղկենք իրեն յարատեւութիւն և յաջողութիւն։

Այլ յիշեն թերեւ Մարաշի արդոյ ընթերցողներն, որ տակէ շուրջ 8-7 ամիս առաջ Արարատեան ընկերութեան նըկատմամբ դրած յօդուածով մը յայտնեք էի թէ քաղաքիս մէջ քանի մ'երեւտատարներ ի մասն ունին օժանդակ մատակարարող մը կազմել և ի նպատակ յիշեալ ընկերութեան բաժանորդ գտնելու հանդակութիւնը բանալ։

Այլ և այլ պարագայից բերմամբ այդ մտածած ողովին կազմութիւնը մինչև այսօր չ'իրագործելով, նոյն երեսնաւորներն

րէն մի քանին ուրիշ ուղիով հետ միացած՝ երկու շարքի է ի վեր և նպատակաւ Արարատեան և Կրթատեսչար Սրբեւեան ընկերութեանց շուրջ 180 մէկտեղ գումար մը հանգանակեցին և մտադիր են բաւական տոկարացնել նոյնը և ապա զրկել յիշեալ ընկերութեանց։

Թէ և գովելի է այս ազգասէր ստանդներուն ձեռնարկը, սակայն ցուաւ լի է ըսել որ ամեն գիւղէ քաղաքէ Տաւկաստանի և ի մասնաւորի Ռուսաստանի և ուր ուրեք Հայ կը գտնուէր մեծաքանակ զուտները թափեցան Արարատեան և Կրթատեսչար-Սրբեւեան ընկերութեանց արկղին մէջ՝ այն ատենէ ի վեր՝ երբ այդ ընկերութիւններն սկսան արդեամբ պիտի կը ազդին իրենց վրայ դրած յայտերը։ նոյն օրէն սկսելով Զմիւռնիոյն չըսեմ՝ տնղայ՝ այլ բոլորովին անտարբեր գըւտնուեցաւ և չ'իտեմք իր լուսայն այս ազգաշէն ընկերութեանց գանձանակին մէջ դնել։

Սրբ Արարատեան ընկերութեան Պ. և Կրթատեսչար-Սրբեւեան ընկերութեան Ռ. տարւոյն տեղեկագիրները հրատարակելիս, միթէ Զմիւռնիոյն զգայուն ու ճշմարիտ Հայուն երեսը չը կարմիր երբ տեսնէ թէ՛ Վ. Պօլէն ետքը՝ իր լուսաւորութեամբ ու յառաջդիմութեամբ փայլուն քաղաքէն ուրիշ անհայտ զուտար մը դացեր է նոյն ընկերութեանց և թէ ուրիշ բարոյապէս ու նիւթապէս ձեռնուած գանձանակ

Զմիւռնիոյն միայն կրնայ արդարօրէն իր անձը՝ երբ սկսի իր աշխատութիւնը տալ այդ հաստատութեանց, և զորմէ անոնց հետ ի լուսաւորութիւն և ի յառաջդիմութիւն Հայաստանի թեղաւոր մերացնեայ եղբարց։

Քաղաքիս Հայ-Ռիթերատեան շուրջ տիր անօրէն խորհուրդն անդու կազմատիւ այս հաստատութեան խմբագրի և և նախանձելի վիճակի մը մէջ գնելու արդէն իր պաշտօնավարութեան սկիզբէն ի վեր բաւական ներքին բարեփոխութիւններ տեսի ունեցան, որոնք յոսուելի է որ միայն ժամանակուան մը համար չըլլան։

Արդէն բաւական ատենէ ի վեր զուրկ մնացեր էինք այս հաստատութեան մէջ ատենախօսներ մտիկ ընելէ, և ուրախութեամբ կը յայտնեմ ձեզ, ազնիւ Մարա, որ այս ամսոյ մէջ սկսեալուորութիւն մ'եղաւ։ Սրբեւեան կերպի է որ բարեազդութիւն կուենանք մտիկ ընել Մեծ. Պ. Ռիթերատեան, որ իրեն նիւթընտրած է թէ ինչ պէտք է լինի Զմիւռնիոյ վարժարանաց նպատակը և որոնք են անոր համար զիտուող միջոցները։ Առաջին անգամ Մեծ. ատենախօսը իսոսեցաւ իր նիւթին տեղի մատակարար կամ լուս և ներքին բարեկարգութեանց վրայ։ Իսկ երկրորդին մէջ լազաւորաց մանկանց ֆիզիքական կենաց բարելաւման կարեւորութիւնը։ Իրաւ է՝ որ ամեն մարդ իր առանձին կարծիքներն ունի, շատ քիչ տարբեր ուրիշներէն։ Ես չեմ ուզեր աստ բացատրել թէ ո՞ր կէտերուն մէջ անհամաձայն էի Պ. ատենախօսին հետ։ այլ միայն սիրելի է ինձ տեսնել որ ես իր ատենախօսութիւնները շարունակէ, որոնք անուշադիր բաւառ օգտակար ներդրութիւնը պիտի ունենան իր ունեղիւրներուն մտացը վրայ։

Մնացեալ հետեւեալ թիւով . . .

Ա. Ձ. Դ.

Հայուհեաց ազգանուէր ընկերութիւնը կը փութայ ծանուցանել թէ ամեն աղքատէր Հայուհիք որք կը կամին յիշեալ ընկերութեան հետ հաղորդակցել, պէտք է իրենց նախնական ուղարկելն Կրթատեսչար-Սրբեւեան անեանի, Կրթատեսչար Ռուս թիւ 11 Ղալաթիա, և կամ իւրաքանչիւր Սէլամիէ քաղաքի գէմը, թիւ 321 տունը։

* Որք են Մեծ. Պ. Պ. Գ. Մարեան, Վ. Սրբեւեան, Յ. Փափաքեան, Թ. Թուսայեան, Ա. Պէրկաւեան։



ጊዛ ሲሆን ይኸው የታሪክ

$l_1 = a \quad l_2 = ap \quad l_3 = p^2$	$l_1 = a \quad l_2 = p \quad l_3 = p^2$
$1 \quad 30$	$11 \quad 30$
$2 \quad 6$	$12 \quad 6$
$2 \quad 30$	$12 \quad 30$
$4 \quad 8$	$4 \quad 8$
$4 \quad 30$	$4 \quad 30$
$2 \quad 9 \quad 20$	$2 \quad 9 \quad 20$
$2 \quad 30$	$2 \quad 30$
$3 \quad 5$	$3 \quad 5$
$3 \quad 45$	$3 \quad 45$
$4 \quad 30$	$4 \quad 30$
$5 \quad 12$	$5 \quad 12$